Հաստատում եմ՝
Երևանյան բժշկության
համալսարանի
տնօրեն, ԳԽ Նախագահ

_____ Ն. Խ. Սարիբեկյան

«27» 12 2022թ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

2020-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ 2021-2022 ԹԹ.

Համալսարանի 2020-2025 թթ.-ի ռազմավարական զարգացման ծրագրի և գործողությունների պլանի արդյունքների գնահատում, ըստ 7 հիմնական ոլորտների համար սահմանված ԳԱՑ-երի, կատարվել է նաև 2021-2022 ուստարում՝ համալսարանի ծավալած գործունեության ամփոփումից հետո:

ՆՊԱՏԱԿ 1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 1.1. Ապահովել ստորաբաժանումների միջև լիազորությունների և գործառույթների արդյունավետ ու հստակ գործառություն:

Ցուցանիշ 1. Գիտխորհրդի և ռեկտորատի նիստեր: Այս ցուցանիշի համար նախատեսված էր տարեկան առնվազն 14 նիստ (ամսական առնվազն մեկ նիստ), որոնք իրականացվել են ուսումնական տարվա սկզբին հաստատված ժամանակացույցի համաձայն:

(Հիմք՝ Հավելված 1.1.1. Գիտական խորհրդի նիստերի օրակարգեր)

Ցուցանիշ 3. Ֆինանսների բաշխման քաղաքականություն: Համալսարանի ֆինանսների բաշխման և տնօրինման նոր քաղաքականությունն իր մեջ ներառում է հաշվապահական հաշվառման խնդիրները, նպատակները, որոնք համապատասխանում են ԱԲՀ-ի 2020-2025 թթ. ԶՌԾ նպատակներին:

(Հիմք՝ Հավելված 1.1.3. 2021-2022 թթ. բյուջեն և հաշվապահության հաշվետվությունները)

Ցուցանիշ 4. Էթիկայի կանոնակարգ և հանձնաժողով: 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակում գիտական խորհրդով հաստատված հետևյալ փաստաթղթերը՝ «ԱԲՀ-ի էթիկայի» և «ԱԲՀ-ի էթիկայի հանձնաժողովի ձևավորման և գործունեության» կանոնակարգերի համաձայն 2021-2022 ուստարում որևէ հարցի վերաբերյալ քննարկում չի եղել: Սա վկայում է այն մասին, որ համալսարանական կյանքի բոլոր ոլորտներում հանդես եկող յուրաքանչյուր դերակատար ապահովել է էթիկայի կանոններին համապատասխան վարքագիծ:

Ցուցանիշ 3-ը գնահատման ենթակա չէ, քանի որ առկա չէ տարեկան զեկույց:

Ցուցանիշ 5. ՊԻԳԲ փուլ բոլոր գործընթացներում: Կարևորելով ՊԻԳԲ շրջափուլի ապահովումը ԱԲՀ-ում՝ հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են կրթության որակի բարելավման աշխատանքները, որոնք ամրագրված են ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի տարեկան հաշվետվություններում:

(Հիմք՝ Հավելված 1.1.5.1. ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի պլան, Հավելված 1.1.2.2. ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի տարեկան կատարողական)

Ցուցանիշ 6. Գործող ՄՌԿ քաղաքականություն: Համաձայն 26.03.2020թ. գիտխորհրդով հաստատված ՄՌԿ քաղաքականության՝ ԱԲՀ-ում մասնագետների հավաքագրումն իրականացվել է պաշտոնի անձնագրի պահանջներին համաձայն:

(Հիմք՝ Հավելված 1.1.6.1. Պաշտոնի անձնագիր, Հավելված 1.1.6.2. ՄՌԿ և ընդհանուր բաժնի տարեկան հաշվետվություն)

Ցուցանիշ 7. ԱԲՀ կառավարման միասնական տեղեկատվական համակարգի առկայություն:

Ցուցանիշ 8. Համալսարանի կատարելագործված տեղեկատվական համակարգ:

Ցուցանիշ 9. ԱԲՀ կառավարման ոլորտում գործող արդիական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:

Տեղեկատվական համակարգը հնարավորություն է տալիս կազմակերպել փաստաթղթերի կառավարումը, շահակիցներին և հասարակությանը տեղեկացնել համալսարանի որակի գործառույթներին:

ԱԲՀ-ի կառավարման միասնական տեղեկատվական համակարգը հանդիսանում է Ինտրանետ /Ինտերնետ միջավայրում գործող համակարգերի և Web էջի համախմբություն:

ԱԲՀ-ն համացանցային տիրույթում ներկայանում է www.utm.am պաշտոնական կայքով, ինչպես նաև facebook սոցիալական ցանցի միջոցով՝ https://www.facebook.com/UniversityofTraditonalMedicine: ԱԲՀ-ի ներքին և արտաքին շահակիցներին իրազեկումն իրականացվող ՄԿԾ-ների, համալսարանի գործունեության և արդյունքների մասին ապահովում է համալսարանի կայքի պատասխանատուն:

Համալսարանում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է պաշտոնական էլ. հասցեի միջոցով՝ info@utm.am, ներքին շրջանառությունը՝ Mail/Agent.ru էլ. հարթակի միջոցով:

Ուսանողների գնահատման օբյեկտիվությունն ապահովելու նպատակով շարունակվում է «Կրեդիտային համակարգ» էլեկտրոնային ծրագրի կիրառումը, որն ապահովում է օբյեկտիվ ու թափանցիկ գործընթաց և մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան:

(Հիմք՝ Հավելված 1.1.7. Կայք-էջի պարբերական հաշվետվություն, Հավելված 1.1.8. «Կրեդիտային համակարգ» էլեկտրոնային ծրագիր, Հավելված 1.1.6.2. ՄՌԿ և ընդհանուր բաժնի տարեկան հաշվետվություն)

Ցուցանիշ 10. Կառավարման բոլոր մակարդակներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավում:

2020-2021 ուստարվա ընթացքում համալսարանում շատ գործողություններ իրականացվել են հատկապես ներքին շահակիցների մասնակցությամբ: Այդ են վկայում ԱԲՀ-ի ռազմավարական զարգացման պլանավորման, ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման հանձնաժողովներին, ամբիոնի նիստերին, Գիտխորհրդի և ռեկտորատի նիստերին նրանց մասնակցությունը, ելույթները:

(Հիմք՝ Հավելված 1.1.10.1.Կառավարման և Գիտական խորհրդի կազմի հրամաններ, Հավելված 1.1.10.2. ԳԽ նիստերի արձանագրություններ)

Ամփոփում

Այսպիսով՝ ըստ Համալսարանի ռազմավարական ծրագրի «Կառավարում և վարչարարություն» չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներն իրականացվում են և միտված են գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-ի) ձեռքբերմանը:

ՆՊԱՏԱԿ 2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 2.1. Վերանայել կրթական գործող ծրագրերը՝ համապատասխանեցնելով ազգային և միջազգային կրթական չափորոշիչներին ու աշխատաշուկայի պահանջներին:

Ցուցանիշ 1. Գործող ՄԿԾ-ների վերաբերյալ վերլուծական զեկույց:

Այս ցուցանիշը ապահովված չէ ամբողջությամբ. 2020-2021 ուստարում մեկնարկած 2 կրթական ծրագրի մշտադիտարկումը նախատեսված էր 2 տարի անց: Այս ժամանակահատվածում հավաքագրվել է տեղեկատվություն (2020-2021, 2021-2022 ուստարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագիրն ավարտած շրջանավարտների շրջանում անցկացված հարցման վերլուծությունները, ավարտական քննական հանձնաժողովների զեկույցների վերլուծությունը, հավատարմագրող խմբի զեկույցները, աշխատակազմի և ուսանողների հետադարձ կապը, ուսանողների առաջընթացը, օտարերկրյա (հնդիկ) ուսանողներին FMGE քննության մասնակցության հաջողությունները և այլն), որի հիման վրա 2022-2023 ուստարվա ավարտին կիրականացվի գործող ՄԿԾ-ների մշտադիտարկում:

<u>Այս ցուցանիշի ապահովումն ընթացքի մեջ է:</u>

Ցուցանիշ 2. Վերապատրաստված դասախոսական կազմ:

Հաշվետու ժամանակահատվածում ՄՌԿ և ընդհանուր բաժնի առաջարկով «Բաբելոն» ուսուցման կենտրոնի կողմից մայիսի 17-ից մինչև հունիսի 17-ը կազմակերպվել և անցկացվել են դասախոսական թվով 28 աշխատակիցների /55 %/ անգլերեն լեզվի վերապատրաստում և ատեստավորում:

Վերապատրաստման ավարտին 27 մասնակցի տրվել են B2 մակարդակի և 1 մասնակցի՝ C1 մակարդակի հավաստագրեր:

<u>(Հիմք՝ Հավելված 1.1.6.2 ՄՌԿ և ընդհանուր բաժնի հաշվետվություն)</u>

Ցուցանիշ 3. Կրեդիտային համակարգի ուղեցույց: Վերապատրաստված անձնակազմ:

2015-2016 ուստարվանից ԱԲՀ-ում գործում է «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգը: Յուրաքանչյուր ուսումնական տարի ՈԱ մասնագետը, դեկանը դասախոսական կազմի հետ կազմակերպում են հանդիպումներ՝ իրազեկելով հատկապես նոր ընդունված դասախոսներին կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման գործընթացների վերաբերյալ:

<u>(Հիմք՝ Հավելված 2.1.3. Դեկանի արձանագրությունները)</u>

Ցուցանիշ 6. Գիտելիքների ստուգման և գնահատման վերանայված կարգ:

Հաշվետու ժամանակահատվածում կիրառվում է 2021թ. վերանայված ԱԲՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը, որը վերանայվել էր ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ստացած գրության /N 05/11.1/7233-2021թ./ հիման վրա:

Շրջանավարտների շրջանում յուրաքանչյուր ուստարվա ավարտին անցկացվող հարցումներում պարտադիր ներառվում են գնահատման համակարգի վերաբերյալ հարցեր /«Ինչպե՞ս կգնահատեք գիտելիքների գնահատման համակարգը», «Ինչպե՞ս եք գնահատում ամփոփիչ ատեստավորման գնահատականի անաչառությունը»:

(Հիմք՝ Հավելված 2.1.6.1. ԱԲՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ, Հավելված 2.1.6.2. ԱԲՀ շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցման վերլուծություն)

Ցուցանիշ 7. Կլինիկական պրակտիկայի ուսանողի պորտֆոլիո:

2020-2021 ուստարվա ուսումնական պլանով պրակտիկա անցնող ուսանողների շրջանում կիրառվում է նոր ներդրված պրակտիկայի թղթապանակը:

(Հիմք՝ Հավելված 2.1.7.1. ԱԲՀ պրակտիկայի պորտֆոլիո, Հավելված 2.1.7.2. ԱԲՀ պրակտիկայի հաշվետվություն)

Այսպիսով, «Կրթական գործունեության» համար սահմանված խնդիրը՝ «Վերանայել կրթական գործող ծրագրերը՝ համապատասխանեցնելով ազգային և միջազգային կրթական չափորոշիչներին ու աշխատաշուկայի պահանջներին» ըստ ԳԱՑ-երի, իրականացվել է, առկա են նաև ընթացքի մեջ գտնվող գործողություններ:

Խնդիր 2.2. Բարելավել առարկայական դասընթացներին վերաբերող փաստաթղթերը:

Ցուցանիշ 1. Ամփոփիչ ատեստավորման կարգ:

2021-2022 ուստարվա ԱԲՀ-ի անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվել է «ԱԲՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի համաձայն:

(Հիմք՝ Հավելված 2.2.1.1. Ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվությունները)

Ցուցանիշ 2. Կլինիկական պրակտիկաների կարգ:

«Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով 2020-2021 ուստարվա ուսումնական պլանով սովորողների համար կիրառվում է վերանայված «ԱԲՀ պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարգը»:

Պրակտիկաներից ուսանողների բավարարվածությունը գնահատելու նպատակով անցկացվել են առցանց հարցումներ:

(Հիմք՝ Հավելված 2.2.2.1. ԱԲՀ պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարգ, Հավելված 2.2.2.2. Պրակտիկայից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման վերլուծություն)

Ցուցանիշ 5. Դասալսումների նոր կարգ:

2021-2022 ուստարում շարունակվել են դասալսումները գործող *«ԱԲՀ-ում դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման ընթացակարգի»* համաձայն: Դասալսումների արդյունքները վերլուծվել են և քննարկվել ոչ միայն ամբիոնի նիստերում, այլև ԳԽ-ում, ներկայացվել են բարելավման առաջարկներ:

(Հիմք՝ Հավելված 2.2.5.1. ԱԲՀ-ում դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման ընթացակարգ,

Հավելված 2.2.5.2. ԳԽ արձանագրություն դասալսումների արդյունքների մասին)

Այսպիսով, «Կրթական գործունեության» համար սահմանված խնդիր 2.2-ը՝ *«Բարելավել առարկայական դասընթացներին վերաբերող փաստաթղթերը»*, ըստ ԳԱՑ-երի, իրականացվել է, առկա են նաև ընթացքի մեջ գտնվող գործողություններ:

Խնդիր 2.3. Ապահովել Համալսարանում որակյալ կադրային ներուժ:

Ցուցանիշ 3. ՊԴ կազմի խրախուսման կարգ:

2021-2022 ուստարում, հիմք ընդունելով *«ԱԲՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի խրախուսման կազմակերպման կարգի»* 3.5 կետը, կրթության, գիտության և բժշկության ոլորտում իր անբասիր աշխատանքի, համալսարանի զարգացման գործում մեծ ավանդի ներդրման համար, համալսարանի 30ամյակի կապակցությամբ 47 աշխատակիցներ պարգևատրվեցին Ավանդական բժշկության համալսարանի անվանական պատվոգրերով:

Համալսարանը շարունակում է իր աշխատակիցների խրախուսման քաղաքականությունը:

(Հիմք՝ Հավելված 2.3.3. Պարգևատրման հրամանները)

Ցուցանիշ 4. ՊԴ կազմի վերապատրաստման կարգ:

Ցուցանիշ 5. ՄՌԿ քաղաքականություն: ՄՌԿ քաղաքականությունից շահակիցների բավարարվածության վերլուծություն կիրականացվի 2022-2023թթ.:

Ցուցանիշ 6. Օտար՝ լեզվի իմացությամբ որակյալ դասախոսական կազմ: ԱԲՀ-ն իրականացնում է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագիր 2 մասնագիտություններով՝ հայերեն և անգլերեն: Վերջինիս իրականացման համար ապահովված է անգլերենի իմացությամբ դասախոսական կազմով:

	Աշխատակիցներ	2020		2021		2022	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
	Դասավանդող	70	*100*	56	100	51	100
	Անգլերեն	63	*81*	53	*95*	45	*88*
	Ռուսերեն	70	*100*	56	*100*	51	*100*

Այսպիսով, «Կրթական գործունեության» համար սահմանված խնդիր 2.3-ը՝ «Ապահովել Համալսարանում որակյալ կադրային ներուժ», ըստ ԳԱՑ-երի իրականացվել է, առկա են նաև ընթացքի մեջ գտնվող գործողություններ:

Խնդիր 2.4. Բարձրացնել ԱԲՀ-ում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը:

Ցուցանիշ 1. Շրջանավարտների էլ. բազա:

«*Կրեդիտային համակարգ*» ներքին էլեկտրոնային ծրագիրը հնարավորություն է տալիս ավտոմատ ունենալ շրջանավարտների էլ. բազա: Բացի այդ, ԱԲՀ-ի ուսումնական մասը հավաքագրում է տեղեկատվություն բոլոր տարիների շրջանավարտների զբաղվածության մասին: Նշենք, որ այդ տեղեկատվությունը օգտագործվում է համալսարանի ՊԴ կազմի համալրման, պրակտիկաների անցկացման և այլ նպատակներով:

(Հիմք՝ Հավելված 2.4.1. Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ ցուցակ)

Ցուցանիշ 2. Ուսանողների խորհրդատվական օժանդակ ծառայություն:

(Հիմքեր՝ Հավելված 2.4. 2.1 Խորհրդատուների հաշվետվություններ,
Հավելված 2.4.2.2 Դեկանի արձանագրություններ):

Ցուցանիշ 3. Համագործակցության գործող պայմանագիր կամ հուշագիր:

2021-2022 ուստարվա ընթացքում համալսարանի Արտաքին կապերի բաժինը համաձայն գործող ՌՀԾ-ի իրականացրել է միջազգային կապերի ընդլայնման ուղղությամբ աշխատանքներ:

(Հիմք՝ Հավելված 2.4.3.1. Արտաքին կապերի բաժնի 2021-2022 ուստարվա հաշվետվություն,
Հավելված 2.4.3.2. Պայմանագրեր 2021թ., 2022թ.)

Ցուցանիշ 4. Մշակված և հրատարակված ուսանողի ուղեցույց:

Այսպիսով, «Կրթական գործունեության» համար սահմանված խնդիր 2.3-ը՝ «Բարձրացնել ԱԲՀ-ում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը», ըստ ԳԱՑ-երի իրականացվել է, առկա են նաև պլանավորման փուլում գտնվող գործողություններ:

Ամփոփում

Այսպիսով, ըստ Համալսարանի ռազմավարական ծրագրի «Կրթական գործունեություն» չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներն իրականացվում են և միտված են գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-ի) ձեռքբերմանը:

ՆՊԱՏԱԿ 3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Խնդիր 3.1. Համալրել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները:

Ցուցանիշ 1. Արդիականացված գրադարան:

(Հիմք՝ Հավելված 3.1.1 Գրադարանավարի հաշվետվություն)

Ցուցանիշ 2. Ֆինանսական ռեսուրսների բաշխում ըստ ՌԶԾ-ի:

(Հիմք՝ Հավելված 3.1.2. Բյուջեի 2022 տարեկան կատարողական %)

Ցուցանիշ 3. Գործող փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ:

Տե՛ս կառավարում և վարչարարություն 1-ին չափանիշի ցուցանիշ 6-ը:

Ցուցանիշ 4. Տարեկան հարցումների արդյունքներ:

2021-2022 ուստարվա ավարտին ևս ԱԲՀ շրջանավարտների շրջանում անցկացվել են ստացած կրթությունից բավարարվածության հարցումներ: Շրջանավարտների կողմից գնահատվել են կրթական գործընթացի կրթական, օժանդակ և վարչական բաղադրիչները:

Դիտարկվող ժամանակահատվածում ուսանողների շրջանում անցկացվել են նաև առցանց հարցումներ պրակտիկայից, կրթական ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից բավարարվածության վերաբերյալ:

(Հիմք՝ Հավելված 2.1.6.2. ԱԲՀ-ի շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծություն, Հավելված 2.2.2.2. Պրակտիկայից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման վերլուծություն, Հավելված 3.1.4.2 Ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսներից և տրամադրվող ծառայություններից ուսանողների բավարարվածության հարցման վերլուծություն)

Այսպիսով, *«Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ»-ի համար սահմանված խնդիր 3.1-ը՝ «Համալրել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները», ըստ ԳԱՑ-երի, հիմնականում իրականացվել է:*

Խնդիր 3.2. Համալրել և կատարելագործել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները:

Ցուցանիշ 1. Ռեսուրսների գնահատման զեկույց:

2021-2022 ուստարվա ընթացքում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի նախաձեռնությամբ կազմակերպվեց Համալսարանում առկա ռեսուրսների գնահատում: Վարչատնտեսական մասի կողմից կատարվեց գույքագրում, ուսանողների շրջանում անցկացվեց հարցումներ:

(Հիմք՝ Հավելված 3.2.1 Զեկույց գույքագրման վերաբերյալ)

Ցուցանիշ 4. Արդիականացված ԳԲՈՒԿ:

ԳԲՈՒԿ-ի արդիականացման նպատակով ԱԲՀ-ն դիտարկվող ժամանակահատվածում ՆՄՀ շրջանակում առաջարկվող ծրագրին մասնակցելու հայտ ներկայացրեց, սակայն «Ավանդական բժշկության համալսարանում բժշկական մասնագիտական կրթության, հետազոտական աշխատանքների արդիականացում և բարելավում» դրամաշնորհային ծրագիրը չընդգրկվեց հաղթող ծրագրերի հնգյակում:

(Հիմք՝ Հավելված 3.2.4. ԳԲՈՒԿ-ի տարեկան հաշվետվություն)

Ցուցանիշ 5. Արդիականացված համացանց:

Որպես բարելավում՝ «Յուքոմ» ՓԲԸ-ի հետ վերանայվել է նախկինում գործող պայմանագիրը, որի շրջանակներում համալսարանին հատկացվել է գերարագ ինտերնետ կապ և WiFi ծածկույթի ավելացում:

(Հիմք՝ Հավելված 3.2.5 Նոր պայմանագիր Յուքոմ)

Ցուցանիշ 6. Գրադարանից օգտվելու մատչելիություն: 2021-2022 ուստարում շարունակվել է գրադարանի ծառայությունների մատուցման բարելավումն ու ընդլայնումը: Աշխատանքն ակտիվ ու օպերատիվ է եղել հատկապես քննական շրջանում: Տարեցտարի ուսանողների հոսքը ընթերցասրահ ավելանում է:

(Հիմք՝ Հավելված 3.1.6 Գրադարանավարի հաշվետվություն):

Ցուցանիշ 7. Ուսանողների և դասախոսների շրջանում հարցումներ:

Վերջին 2 տարիների ընթացքում դասախոսների շրջանում կարիքների վերհանման հարցումներ չեն անցկացվել: Նշված ժամանակահատվածում անցկացվել են առցանց հարցումներ միայն ուսանողների շրջանում, որոնց վերլուծությունները տեղադրված են համալսարանի պաշտոնական կայքում:

Այսպիսով, «Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ»-ի խնդիր 3.2-ը՝ «Համալրել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները», ըստ ԳԱՑ-երի, կարող ենք փաստել, որ մասամբ է իրականացվել, շատ աշխատանքներ ընթացքի մեջ են և/կամ շարունակական:

Խնդիր 3.3. Ավելացնել ֆինանսական ներհոսքը՝ որոնել ֆինանսական նոր միջոցներ և իրականացնել դրանց հավասարակշռված և նպատակային կառավարում:

Ցուցանիշ 1. Ֆինանսական միջոցներ ըստ ՌԶԾ-ի:

(Հիմք՝ Հավելված 3.1.2. Բյուջեի 2022 տարեկան կատարողական %)

Ցուցանիշ 2. Ֆինանսական հոսքերը խթանող ծրագրեր:

ԱԲՀ-ն իր 2020-2025 թթ. ՌԶԾ-ի շրջանակում խնդիր է դրել մասնակցել դրամաշնորհային մրցույթային ծրագրերի՝ ֆինանսական հոսքերը բազմազանեցնելու և համալսարանում

հետազոտական գործունեությունը խթանելու նպատակով, սակայն դիտարկվող ժամանակահատվածում չի հաջողվել շահել որևէ դրամաշնորհային ծրագիր:

Ցուցանիշ 3. Պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմեր:

Վերանայվել է ԱԲՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմերը: Նորմերը չեն փոփոխվել, միայն ծանոթություն կետում ավելացել է 3.5 ենթակետը՝

Առարկայական տարբերություն հանդիսացող դասընթացների լրացումն ու հանձնումը իրականացնելու նպատակով կազմակերպված խորհրդատվությունների համար դասախոսը ստանում է համապատասխան հավելավճար:

***(Հիմք՝ Հավելված 3.3.3.* Պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմեր)**

Ցուցանիշ 4. Ուսանողների խրախուսման և ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման /զեղչերի / տրամադրման կանոնակարգ:

2021-2022 ուստարում 1 գերազանց առաջադիմությամբ սովորող ուսանողի ուսման վարձը զեղչվել է 18%-ով, 2 ուսանողի վարձը 50-ով /միակողմանի ծնողազուրկ/, 2 օտարերկրի ուսանողի ուսման վարձը՝ զեղչվել է 10%-ով:

(Հիմք՝ Հավելված 3.3.4. Ռեկտորի հրամանները)

Այսպիսով, «Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ»-ի խնդիր 3.3-ը՝ «Ավելացնել ֆինանսական ներհոսքը՝ որոնել ֆինանսական նոր միջոցներ և իրականացնել դրանց հավասարակշռված և նպատակային կառավարում», ըստ ցուցանիշների, կարող ենք փաստել, որ մասամբ են իրագործվել, սակայն չեն անտեսվել:

Ամփոփում

Այսպիսով, ըստ Համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրի *«Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ»* չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներն իրականացվում են և միտված են գործունեության առանցքային ցուցանիշների ձեռքբերմանը:

ՆՊԱՏԱԿ 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 4.1. Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը:

Ցուցանիշ 1. ԱԲՀ-ի նոր պաշտոնական վեբ կայք:

2021-2022 ուստարում ուսանողների շրջանում անցկացված առցանց հարցումները նպատակ ունեին պարզել նաև տեղեկատվական համակարգից ուսանողների բավարարվածությունը:

4. <u>Բավարարվածությունը ԱԲՀ-ի պաշտոնական կայքից, ֆեյսբուքյան էջից</u>

4.1. Հաճա՞խ եք օգտվում ԱԲՀ-ի էլ. կայքից:



4.2. Գնահատեք՝



4.3. Հաճա՞խ եք օգտվում ԱԲՀ-ի ֆեյսբուքյան էջից



4.4. Գնահատեք Ձեր բավարարվածությունը տեղեկատվության լիարժեքությունից



4.5. Գնահատեք ձեր գոհունակությունը նորությունների լուսաբանումից



Առաջարկվել է մեծացնել ուսանողների հետաքրքրվածությունը ԱԲՀ-ի պաշտոնական կայքի նկատմամբ՝ ուսանողներին հասանելի դարձնելով արդեն իսկ մշակված անգլալեզու նյութերը:

Պաշտոնական վեր կայքի բարելավման աշխատանքների մասին առկա է կայքի պատասխանատուի հաշվետվությունը:

(Հիմք՝ Հավելված 1.1.7. Կայքի պատասխանատուի հաշվետվություն)

Ցուցանիշ 2. Ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգ: Համալսարանում պարբերաբար ուսումնասիրվում են ուսանողների կրթական

կարիքները՝ կրթական միջավայրի բարելավման աշխատանքների իրականացման նպատակով, որը համարվում է ռազմավարական առաջնահերթություններից մեկը: Այս առումով իրականացվում են մի շարք միջոցառումներ. սոցիոլոգիական հարցումներ, հանդիպումներ, աշխատանք ուսանողական խորհրդի հետ, տեղեկատվության տրամադրման և ուղղորդման աշխատանքներ:

(Հիմք՝ Հավելված 4.1.2. Հարցումների կանոնակարգեր)

- Համալսարանի յուրաքանչյուր ամբիոն կիրառում է ուսումնական մասի կողմից կազմված «Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների մատյան»: Յուրաքանչյուր ամբիոն ուսուցանվող առարկաների շրջանակում լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներն իրականացնում է ըստ ամբիոններում սահմանված ժամանակացույցի և կատարողների:

(Հիմք՝ Հավելված 4.1.2.1. Լրացուցիչ խորհրդատվությունների մատյան, ժամանակացույց)

Դեռևս չի իրականացվել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների արդյունավետության համակարգված գնահատում և վերլուծություն:

Ցուցանիշ 3. ՈՒԳԸ կանոնադրություն: 2021-2022 ուստարում վերանայվել է ՈՒԳԸ կանոնադրությունը և հետազոտական աշխատանքներում ուսանողների ընդգրկվածության գործառույթը: Գիտական մասի կողմից կատարվել են բարեփոխումներ ՈՒԳԸ կանոնակարգի մեջ, մասնավորապես՝ ներմուծվել է ուսանող-ծրագրավարների (facilitator) ներգրավման համակարգը, ինչն ավելի շատ նախադրյալներ և լծակներ է ստեղծել ուսանողներին գիտական աշխատանքներում ներգրավելու համար: Մանրամասն տեղեկատվությունը հասանելի է ԱԲՀ գիտական մասի 2021-2022 հաշվետվությունում և ՈՒԳԸ վերանայված կանոնադրությունում:

(Հիմք՝ Հավելված 4.1.3.1. Գիտական մասի հաշվետվություն, Հավելված 4.1.3.2. ՈՒԳԸ կանոնադրություն)

Ցուցանիշ 3. Բուհ-գործատու գործող ընթացակարգ: Այս ընթացակարգը բացակայում է:

Այսպիսով, *«Ուսանողակենտրոն քաղաքականության»* համար սահմանված խնդիր 4.2-ը՝ *«Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը»*, ըստ ԳԱՑ-երի, մասամբ իրականացված է, ունենք որոշ անկատար ցուցանիշներ:

Խնդիր 4.2. Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը:

Ցուցանիշ 1. Արտալսարանային միջոցառումների տարեկան պլան:

(Հիմք՝ Հավելված 4.2.1. Ամբիոնային աշխատանքային պլաններ, հաշվետվություններ)

Ցուցանիշ 2. Ուսանող կառավարման մարմիններում:

(Հիմք՝ Հավելված 1.1.10.1. Կառավարման և Գիտական խորհրդի կազմի հրամաններ, Հավելված 1.1.10.2. ԳԽ նիստերի արձանագրություններ)

Ցուցանիշ 4. Ուսխորհրդի տարեկան պլան:

(Հիմք՝ Հավելված 4.2.4. Ուսխորհրդի տարեկան պլան և հաշվետվություն)

Ցուցանիշ 6. Տեղեկատվության բարձրացման միջոցառումների պլան-ժամանակացույց:

Համալսարանում, ճիշտ է, տեղեկատվության բարձրացման միջոցառումների պլան-ժամանակացույց առկա չէ, սակայն թե՛ ուսանողների և թե՛ դասախոսների շրջանում, հատկապես ուսումնական տարվա սկզբին, կազմակերպվում են հանդիպումներ դեկանի, արտաքին կապերի բաժնի ղեկավարի հետ՝ ԱԲՀ-ում գործող մի շարք կարգերի, ուղեցույցների մասին իրազեկելու, ներքին տեղեկատվությունը բարձրացնելու նպատակով, որոնք արձանագրվում են:

(Հիմք՝ Հավելված 4.2.6. Դեկանի արձանագրությունները)

Այսպիսով, *«Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը» խնդիր 4.2-ի համար սահմանված ԳԱՑ-երը ձեռքբերված են:*

Ամփոփում

Ըստ Համալսարանի ռազմավարական ծրագրի *«Ուսանողակենտրոն քաղաքականություն»* չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներին համապատասխան ոչ բոլոր խնդիրներն են իրականացվել սահմանված ժամկետներում, կան մասամբ իրականացված և ընդհանրապես չիրականացված գործողություններ *(բուհ-գործատու համագործակցություն, կարիքների վերհանման մեխանիզմների արդյունավետության գնահատում)*, որոնք անհրաժեշտ է վերհանել՝ հասկանալու խոչընդոտները կամ գուցե դրանց իրագործման ոչ նպատակահարմարությունը:

ՆՊԱՏԱԿ 5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Խնդիր 5.1. Ընդլայնել միջազգայնացման ուղղությամբ արդյունավետ զարգացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումները:

Ցուցանիշ 1, 2. Արտաքին կապերի ԶԾ, քաղաքականություն (համագործակցության ընդլայնում):

Համալսարանի արտաքին կապերի զարգացման ծրագիր, արտաքին կապերի քաղաքականություն՝ որպես համալսարանի Արտաքին կապերի բաժնի գործունեությունը կարգավորող առանձին փաստաթղթեր, ԱԲՀ-ում առկա չեն, սակայն Արտաքին կապերի բաժինն իր ռազմավարությունն իրականացնում է ԱԲՀ-ի ռազմավարական զարգացման ծրագրի հիման վրա:

2021-2022 ուստարում կնքվել է համագործակցության 2 պայմանագիր:

(Հիմք՝ Հավելված 2.4.3.1. Արտաքին կապերի բաժնի 2021-2022 ուստարվա հաշվետվություն,

Հավելված 2.4.3.2. Պայմանագրեր 2021թ., 2022թ.)

Այսպիսով, խնդիր 5.1-ը՝ *«Ընդլայնել միջազգայնացման ուղղությամբ արդյունավետ զարգացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումները»*, ըստ ԳԱՑ-երի իրականացված է:

Խնդիր 5.2. Ընդլայնել և խթանել համալսարանի միջազգային կապերի զարգացմանը Եվրոպական, Ասիական և ԱՊՀ-ի ուսումնական հաստատությունների հետ համալսարանական և ծրագրային մակարդակներում:

Ցուցանիշ 1. Համագործակցության ընդլայնում:

(Հիմք՝ Հավելված 2.4.3.1. Արտաքին կապերի բաժնի 2021-2022 ուստարվա հաշվետվություն,

Հավելված 2.4.3.2. Պայմանագրեր 2021թ., 2022թ.)

Ցուցանիշ 2. Միջազգային գիտակրթական միջոցառումներ: ՈՒԳԸ-ն ԱԲՀ գիտական մասի հետ համատեղ, հաջողությամբ ներգրավել է ուսանողներին Հայաստանյան տարբեր կոնֆերանսներին և գիտական միջոցառումներին մասնակցելու, ինչպես նաև տարբեր գիտահետազոտական կենտրոններ այցելություններ կազմակերպելու գործում:

(Հիմք՝ Հավելված 4.1.3.1. Գիտական մասի հաշվետվություն,

Հավելված 5.2.2.1. ՈՒԳԸ հաշվետվություն)

Ցուցանիշ 3. ՊԴ և ուսանողների շարժունություն: Համալսարանի կրթական ծրագրերի գնահատման լավագույն ցուցիչ է համարվում ուսանողների շարժունության ապահովումը: Ուսանողների շարժունությունը որոշ դեպքերում իրականացվում է ուսումնաարտադրական պրակտիկան արտերկրում անցկացնելու միջոցով:

Համալսարանն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովելու համաձայնագրեր՝ Բելառուսի Հանրապետության Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի և ԱՄԷ Շարժա, «Ընքսես Փոինթ» քոլեջի հետ: Վերջինիս հետ արդեն 2022-2023 ուստարում իրականացրել ենք 17 ուսանողների փոխանակում: Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի հետ նախատեսվում է կազմակերպել համատեղ ուսումնաարտադրական պրակտիկաներ:

Ցուցանիշ 4. Միջազգային վերապատրաստում:

Վերջին 3 տարիների ընթացքում համալսարանը միջազգային վերապատրաստումներ չի կազմակերպել, սակայն Համալսարանի դասախոսների մի մասը մասնագիտական կատարելագործում են անցել արտերկրում կամ արտերկրից ժամանած մասնագետների մոտ, մասնակցել են ուսումնամեթոդական և գիտական կոնֆերանսների:

(Հիմք՝ Հավելված 5.2.4. Վերապատրաստում անցած դասախոսների ցուցակ)

Այսպիսով, խնդիր 5.2-ի՝ «Ընդլայնել և խթանել համալսարանի միջազգային կապերի զարգացմանը Եվրոպական, Ասիական և ԱՊՀ-ի ուսումնական հաստատությունների հետ համալսարանական և ծրագրային մակարդակներում» ԳԱՑ-երն ապահովված են:

Խնդիր 5.3. Ընդլայնել և ապահովել կապը հանրության հետ, զարգացնել շարունակական կրթությունը:

Ցուցանիշ 1. Հաշվետվությունների նոր ձևաչափ:

Ուսումնական գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով, համաձայն ԱԲՀ-ի 2020-2025թթ. ՌԶԾ-ի 5.3. կետի պահանջների, ստորաբաժանումների համար մշակվել և ներդրվել է գործունեության պլանավորման և կատարողականի նոր ձևաչափ՝ կրթական գործունեություն, ուսանողակենտրոն քաղաքականություն, արդիական հետազոտություններ և նորարարություններ, որակի ապահովման ներքին համակարգ ուղղություններով: Ստորաբաժանումների պլանավորումն իր մեջ ներառում է՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողություններ, նշված հստակ վերջնարդյունքներ և վերջնաժամկետներ: Կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները ԳԽ-ում ներկայացնում են ընթացիկ և տարեկան հաշվետվություններ, ինչը թույլ է տալիս վերահսկել ստորաբաժանումների գործունեությունը, պարզել նախանշված ծրագրերի իրականացման արդյունավետությունը: Ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների հիման վրա կազմվում է համալսարանի տարեկան հաշվետվությունը:

(Հիմք՝ Հավելված 5.3.1. Համալսարանի 2021-2022 ուստարվա հաշվետվություն)

Ցուցանիշ 2. Արդիականացված կայք:

(Հիմք՝ Հավելված 1.1.7. Կայք-էջի պարբերական զեկույց)

Ցուցանիշ 3. Ծառայությունների մատուցման կարգ:

Պլանավորվում է:

Այսպիսով, *վերոնշյալ* խնդիրը՝ *«Ընդլայնել և ապահովել կապը հանրության հետ, զարգացնել շարունակական կրթությունը»*, ըստ ԳԱՑ-երի կարող ենք փաստել, որ իրականացվել է մասամբ, քանի որ ցուցանիշ 3-ը բացակայում է:

Ամփոփում

Այսպիսով, ըստ Համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրի *«Արտաքին կապեր և միջազգայնացում»* չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, տարեկան զեկույցներից, հաշվետվություններից պարզ է, որ սահմանված նպատակներին համապատասխան խնդիրներն իրականացվել են սահմանված ժամկետներում, կան պլանավորվող գործողություններ:

ՆՊԱՏԱԿ 6. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 6.1. Նպաստել ԱԲՀ-ում ՊԴ կազմի մասնագիտական և հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ցուցանիշ 1. Հետազոտությունների առաջընթացի ցուցիչներ:

Հստակեցվել են ԱԲՀ-ի գիտահետազոտական գործունեության ուղղությունները:

(Հիմք՝ Հավելված 6.1.1. Գիտական բարդուղարի զեկույց)

Ցուցանիշ 2. Գիտական մասի ռազմավարական պլան:

Վերջին տարիներին գիտական մասի վարիչի մեծ ջանքերի, նախաձեռնության, հետևողական աշխատանքի շնորհիվ ակտիվացել է համալսարանի գիտական գործունեությունը, որն առաջնորդվում է 2020-2025թթ. ԱԲՀ ՌԶԾ-ի համաձայն մշակած աշխատանքային պլանով:

(Հիմք՝ Հավելված 4.1.3.1. Գիտական մասի հաշվետվություն):

Ցուցանիշ 3. Հետազոտական աշխատանքներ:

Վերջին տարիներին, մասնավորապես՝ դիտարկվող ժամանակահատվածում, Համալսարանը ՈւԳԸ-ի և գիտական մասի համագործակցության միջոցով հնարավորություն է ընձեռում տարբեր կուրսերի ուսանողներին մասնակցելու համալսարանի գիտահետազոտական աշխատանքներին: Մանրամասն տեղեկատվությունը հասանելի է ԱԲՀ գիտական մասի և ՈՒԳԸ-ի տարեկան հաշվետվություններում, որոնք տեղադրված են ԱԲՀ պաշտոնական կայքում:

(Հիմք՝ Հավելված 4.1.3.1. Գիտական մասի հաշվետվություն,
Հավելված 5.2.2.1. ՈՒԳԸ հաշվետվություն):

Խնդիր 6.2. Խթանել Համալսարանում հետազոտական գործունեությունը:

Ցուցանիշ 1. Գիտական և հետազոտական թեմաներ:

Ցուցանիշ 2. Առևտրայնացման միջոցառումներ:

Ցուցանիշ 3. Ամբիոնական գիտական թեմաներ:

Ցուցանիշ 4. ԳԲՈՒԿ-ի ՌԾ և ժամանակացույց:

Ցուցանիշ 5. Կազմակերպությունների ցանկ:

Ցուցանիշ 6. Համատեղ հետազոտական թեմաներ:

Դիտարկվող ժամանակահատվածում այս բոլոր ցուցանիշներն ամբողջությամբ առկա չեն, այն ներառում է ԱԲՀ-ի գործունեության 2020-2025թթ.:

Վերջին տարիներին համալսարանը զգալիորեն ակտիվացրել է իր համագործակցությունները գիտաբժշկական և հետազոտական կենտրոնների հետ, զգալիորեն աճել է հատկապես ուսանողների ներգրավվածությունը բժշկական և կենսաբժշկական գիտահետազոտական նախագծերում և գիտական միջոցառումներում:

Գիտահետազոտական և գիտամանկավարժական կոնկրետ աշխատանքների շնորհիվ ստացված արդյունքները կրթական ծրագրերում գործնական բժշկության մեջ ներդնելու նպատակով ներկայացվում են համալսարանում կազմակերպված սեմինարներում, հանրապետական և միջազգային կոնֆերանսներում: Լավագույն հոդվածները տպագրվում են:

Հուսով ենք, սահմանված նպատակները կիրականացվեն անհրաժեշտ մակարդակով:

Խնդիր 6.3. Խթանել Համալսարանում հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Ցուցանիշ 1. Միջոցառումների օրացուցային պլան:

2021-2022 ուստարում ԲՀ Գրոդնոյի պետական բժշկական համալսարանի հետ համատեղ կազմակերպվել է 4 առարկայական դասընթացներից փոխադարձ դասախոսություններ հեռավար ձևաչափով:

(Հիմք՝ Հավելված 6.3.1. Արձանագրություն փոխադարձ դասալսումների վերաբերյալ)

Ցուցանիշ 3. Գիտական մասի և ՈՒԳԸ-ի միջոցառումներ:

Հաշվետու տարում Գիտական մասի և ՈՒԳԸ-ի համատեղ իրականացրած միջոցառումները լուսաբանվել են ԱԲՀ պաշտոնական կայքում և ֆեյսբուք սոցիալական ցանցում:

Ցուցանիշ 4. ՊԴ կազմի գիտական աշխատանքներ:

2012-2022 ուստարում ՊԴ կազմի գիտական աշխատանքներն ամփոփված են Գիտական մասի հաշվետվությունում:

(Հիմք՝ Հավելված 4.1.3.1. Գիտական մասի հաշվետվություն)

Ամփոփում

Այսպիսով, ըստ Համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրի «*Արդիական հետազոտություններ և նորարարություն*» չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներին համապատասխան խնդիրների լուծման ուղղությամբ մեծ աշխատանքներ են տարվել, ի տարբերություն նախորդ տարիների:

ՆՊԱՏԱԿ 7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Խնդիր 1. Նպաստել ԱԲՀ-ում ՊԴ կազմի մասնագիտական և հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ցուցանիշ 1. ՈՆԱ քաղաքականություն և ընթացակարգ:

Որակի ապահովման քաղաքականությունը գործնականում իրականացվում է հաստատության ռազմավարական պլանին համապատասխան, որակի ապահովման կրթական, գիտահետազոտական, կազմակերպչական տարաբնույթ գործընթացներով՝ բոլոր ստորաբաժանումների և շահակիցների մասնակցությամբ:

(Հիմքեր՝ Հավելված 7.1.1. ԱԲՀ կրթության որակի ներքին ապահովման քաղաքականություն, Հավելված 7.1.2. ԳԽ-ին կից ՈԱՀ-ի, ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի արձանագրություններ)

Ցուցանիշ 2. ՈԱ քաղաքականության գնահատում:

Հիմք ընդունելով հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվությունները՝ կազմվել է «Թերությունների վերացման պլան-ժամանակացույց», ըստ որի իրականացվել են գործողություններ՝ միտված ՈԱ ներքին համակարգի քաղաքականության բարելավմանը: Վերհանված թերությունների վերացման ուղղությամբ կատարվել են պլանավորված ու հետևողական գործընթացներ, ինչպիսիք են կրթական ծրագրերի արտաքին փորձաքննությունը, բենչմարքինգը, կրթական ծրագրերի վերանայումը, ամբիոնների 3 տարվա գործունեության մշտադիտարկումը: Իրականացվել է նաև տեղեկատվական, նյութատեխնիկական և ուսումնա-մեթոդական հենքի անընդհատ կատարելագործում՝ ուսանողների շրջանում անցկացված հարցումների հիման վրա: Այս ամենի մասին զեկուցվել է ԱԲՀ ԳԽ-ում, ընդունվել են համա-պատասխան որոշումներ:

(Հիմք՝ Հավելված 7.1.2. ԱԲՀ տարեկան հաշվետվություններ)

Ցուցանիշ 3. Գործող հետադարձ կապի մեխանիզմ:

ԱԲՀ-ն իր ներքին և արտաքին շահակիցներին օբյեկտիվ տեղեկատվության տրամադրման միջոցով ձգտում է ամրապնդել բուհի և շահակիցների միջև կապը, բարձրացնել կրթական, գիտական և այլ ծառայությունների որակը, բուհի վարկանիշը պոտենցիալ շահակիցների շրջանում:

Կիրառվում են շահակիցների տեղեկացվածության և հաշվետվողականության ապահովման մի քանի մեխանիզմներ՝

- ԱԲՀ-ի պաշտոնական կայքէջը՝ www.utm.am, որտեղ տեղադրված տեղեկատվությունը հնարավորություն է տալիս ուսանողներին, ապագա դիմորդներին և այլ արտաքին շահակիցների ծանոթանալու բուհի տրամադրած կրթական և գիտահետազոտական ծառայություններին:
- Ֆակուլտետների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները բուհի ղեկավարությանը:
- Համալսարանի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, որտեղ ամփոփվում են տվյալ ուստարում ուսումնական, գիտահետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները: Այն ներկայացվում է Գիտխորհրդին և տեղադրվում բուհի պաշտոնական կայքում:
- 2018-2019 ուստարվանից բուհում ներդրված ուսանողների առաջադիմության և շարժի, ինչպես նաև ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունն ապահովող «Կրեդիտային համակարգ» էլեկտրոնային ծրագիրը:
- Բուհում բոլոր գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի՝ կանոնակարգերի և ընթացակարգերի, գիտխորհրդի, ռեկտորատի արձանագրությունների ու որոշումների հասանելիությունը բուհի աշխատակիցներին՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով:
- ԱԲՀ-ի ֆեյսբուքյան էջում լուսաբանվող միջոցառումները, հարցազրույցները, ինչպես նաև տեղադրված հայտարարությունները, ուսանողական կյանքին վերաբերող նորությունները:
- info@utm.am էլեկտրոնային փոստի միջոցով հետադարձ կապի ապահովումը:

- Ուսանողների շրջանում անցկացվող սոցհարցումները:
- Համալսարանի գործունեության մասին օրենքով սահմանված կարգով պետական տարբեր մարմիններին ներկայացվող ֆինանսատնտեսական հաշվետվությունները:
- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետությունը արտաքին շահակիցներից ԿԳՄՍ նախարարությանը:
- ՀՀ ԱՆ-ն տրամադրվող տեղեկատվությունը գիտաբժշկական ուսումնական կենտրոնի բուժսպասարկման գործունեության որակի մասին:

(Հիմք՝ Հավելված 5.3.1. Համալսարանի 2021-2022 ուստարվա հաշվետվություն, Հավելված 7.1.3. ԱԲՀ կայք, Facebook սոց.հարթակ)

Ցուցանիշ 5. Գործող հանձնաժողով և աշխատանքային խմբեր:

Ռեկտորի հրամանով անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր ուստարում կարող են ձևավորվել հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր: Ըստ ժամանակացույցի ներկայացվում են կատարողական զեկույցներ և հաշվետվություններ: 2021-2022 ուստարում իր գործունեությունն է շարունակել ՈԱ հանձնաժողովը: Ստեղծվել են 2 հանձնաժողով՝ մեկը ինչպես յուրաքանչյուր ուստարվա ավարտին՝ ավարտական ամփոփիչ ատեստավորման նպատակով ձևավորված հանձնաժողովն է, մյուսը՝ ամբիոնների 3 տարվա գործունեության մշտադիտարկումն անցկացնելու նպատակով:

(Հիմք՝ Հավելված 2.2.1.1. Ավարտական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների հաշվետվությունները, Հավելված 7.1.5.1. ՈԱՀ Հանձնաժողովի զեկույցներ, Հավելված 7.1.5.2. Ամբիոնների գործունեության մշտադիտարկման արդյունքների մասին զեկույց)

Ցուցանիշ 7. Ըստ ԱԲՀ-ի նոր գծային կառուցվածքի ՈԱ գործընթացների վերաբերյալ համընդհանուր ընկալում:

2020-2021 ուստարվանից ներդրվել է բոլոր ստորաբաժանումների, այդ թվում նաև ՈԱ համակարգի պլանավորման և կատարողականի նոր ձևաչափ: Աստիճանաբար ձևավորվում է ՊԻԳԲ շրջափուլի մշակույթը:

Ցուցանիշ 8. ԱԲՀ-ի նոր գծային կառուցվածք:

2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում տեղի ունեցավ ԱԲՀ-ի կառուցվածքային փոփոխություն, որի արդյունքում վերանայվեց նաև համալսարանի հաստիքացուցակը: ԱԲՀ կազմակերպական կառուցվածքի արդյունավետության գնահատում չի իրականացվել:

Ցուցանիշ 9. Կարիքների վերհանման, գնահատման վիճակագրական տվյալներ:

ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման համար Համալսարանում կիրառվում են տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Մասնավորապես, պարբերաբար իրականացվում են ՄԿԾ-երից շահակիցների բավարարվածության վերաբերյալ հարցումներ (Պրակտիկայից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումներ, Շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության հարցումներ, Դասընթացի արդյունավետության գնահատում և այլն), մշտադիտարկումներ, կիրառվում են քննարկումների և կարիքների վերհանման տարբեր գործիքակազմեր:

Կարիքների վերհանման, գնահատման վիճակագրական տվյալները ներկայացվում են հարցումների վերլուծություններում ներկայացված դիագրամների միջոցով: Վերջին 3 տարիների առցանց հարցման վերլուծությունները հասանելի են բոլորին՝ www.utm.am ՈԱ համակարգ բաժնում:

Ցուցանիշ 10. Գործող ՊԻԳԲ շրջափուլ:

Տե՛ս Նպ. 1, ցուցանիշ 5:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, դատելով Համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրի *«Որակի ապահովման ներքին համակարգ»* չափանիշում ներառված նպատակների իրականացման արդյունքներից և ԳԱՑ-երից, կարող ենք փաստել, որ ՈՆԱ համակարգը սահմանված վերջնարդյունքներին հասնելու համար դեռ շատ հետևողական քայլեր ունի իրականացնելու:

Ընդհանուր առմամբ, ամփոփելով 2021-2022 ուստարվա ԱԲՀ-ի գործունեությունն իր բոլոր ոլորտներում, իր առջև դրված նպատակներին հասնելու միջոցառումների արդյունավետությունը՝ ըստ ԳԱՑ-երի, պարզ է դառնում, որ համալսարանը ճիշտ ուղու վրա է իր ՌԶԾ-ի իրագործման բոլոր փուլերում:

Ամփոփելով, կարող ենք առանձնացնել այն ցուցանիշները, որոնք մնացել են անկատար, ընթացքի մեջ են կամ պլանավորման փուլում: Դրանք են՝

1. ԱԲՀ-ի արտաքին գործոնների ուսումնասիրության վերաբերյալ SWOT:
2. ԱԲՀ կազմակերպական կառուցվածքի արդյունավետության գնահատում:
3. Գործող ՊԻԳԲ շրջափուլ բոլոր մակարդակներում: